

ԲՆԱԶԴԻ ԵՎ ԲՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ` ԸՍՏ Դ.Հ ԼՈՒՐԵՆՍԻ

Վիոլետա Հովհաննիսյան
Երևանի պետական համալսարան

Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել Դ.Հ. Լուրենսի տեսակետը բնազդի և բանականության հակադրության վերաբերյալ, ինչը հրաշալի կերպով արտահայտված է «Կինը, ով հեռացավ» պատմվածքում, որտեղ հեղինակը փորձում է ցույց տալ, որ «պարզունակ իրականության» ընկալումը մարդու գիտակցության սահմաններից դուրս է, այն պետք է անել բնական ազդակների միջոցով:

Բանալի բառեր. բանականություն, բնազդ, պարզունակ իրականություն, մտավոր գիտակցություն և արյան գիտակցություն, հոգեվերլուծություն, տիեզերական միասնություն, բնական ազդակներ, միտք և մարմին:

Ներածություն

Համալսարանական տարիներին Լուրենսիսին հիացրել է անգիտակցականի ուժը: Նրա վրա մեծ ազդեցություն են ունեցել 19-րդ դարի գիտական գրքերը, որոնցից հետո նա սկսել է ընդունել գիտնականների տեսակետները մտքի և մարմնի, մտավոր գիտակցության և արյան գիտակցության (mental consciousness and blood consciousness)՝ բանականության և բնազդի վերաբերյալ: Հետագայում նա անգիտակցականի մասին իր տեսակետները շարադրում է մի քանի ակնարկներում: Մի ողջ գիտություն կա անգիտակցականի վերաբերյալ, որը նույնքան անհասկանալի է, որքան և բնության օրենքները, սակայն այն պահին, երբ մարդն ընդունում է դրա ներկայությունը, նա ազատ է համարվում իր բոլոր գործողություններում:

Լուրենսը «Հոգեվերլուծություն և անգիտակցական» ակնարկում գրում է, որ մարդիկ տառապում են այն փաստից, որ սահմանափակել են իրենց անգիտակցականի սահմանները: Այն պահին, երբ նրանք ընդունեն այդ անձանոթ, անհասկանալի անգիտակցականի գոյությունը և սկսեն հետևել դրան, երբ կարողանան սահմանել դրա օրենքները և գործընթացները իրենք իրենց մեջ, ապա վերջապես կկարողանան ապրել ինքնաբուխ, բնական և կազատվեն մահացած, կարծրացած գաղափարներից, սկզբունքներից և իդեալներից:

Անգիտակցականի ուժը

Դանիել Շնայդերը «Դ.Հ. Լուրենսի գիտակցությունը» գրքում խոսում է Լուրենսի մտքի և մարմնի հակադրության վրա ունեցած ազդեցությունների մասին: Երբ Լուրենսը դեռ քսան տարեկան էր, սկսել էր կարդալ Շոպենհաուեր և փորձել էր կապել նրա փիլիսոփայությունը Դարվինի, Հաբսլիի, Սպենսերի և Հեգելի գաղափարների հետ: Նրանց գիտական տեսակետները մեծ ազդեցություն ունեցան հետագայում Լուրենսի «Հոգեվերլուծություն և անգիտակցական» ակնարկի վրա: Ըստ Վիլլիամ Ջեյմսի տեսության՝ ֆիզիոլոգիական գործունեությունը նախորդում է հուզական արձագանքին. «Ես չեմ հարվածում,

քանի որ բարկացած եմ, ես բարկացած եմ, քանի որ հարվածում եմ: Ես չեմ արտասվում, քանի որ դժբախտ եմ, ես դժբախտ եմ, քանի որ արտասվում եմ» (Lawrence 2007:212): Ջզացմունքները՝ սերը կամ ատելությունը գիտակցական մտքի արդյունքում չեն առաջանում: Ջեյմսի տեսությունը հաստատում է Լուրենսի՝ Շոպենհաուերի և Նիցշեի գաղափարների մասին ունեցած իր տեսակետը, որ միտքը չի կարող իրականությունը ներկայացնել: Այն հնարավոր է միայն բնագոյի և ինտուիցիայի շնորհիվ և ոչ թե մտքի (Schneider 1986:50): Ինչպես նկատել է Շնայդերը, Լուրենսի փիլիսոփայական մտքերի ձևավորման գործում մեծ ազդեցություն են ունեցել Էդվարդ Քարփենթերի գաղափարները: Գուցե, ամենակարևոր միտքը, որ հիացրել է երիտասարդ Լուրենսին, եղել է նոր երկինք և նոր երկիր ստեղծելու նախագիծը, որոնք այլևս չէին ենթարկվի քաղաքական և տնտեսական փոփոխությունների: Առողջ հասարակությունը պետք է հիմնված լինի տիեզերական միասնության վրա: Տիեզերական միասնության հիմքը զգացմունքներն են, բնական ազդակները (Schneider 1986:57): Այս գաղափարը արհամարհանքի և ծաղրի է արժանացել մտավորականների՝ Ռասսելի և Բլումսբրի-Քեմբրիջ խմբի անդամների կողմից, որոնք կարծում էին, որ բանականությունը և գիտակցությունը ինքնավար գործիքի դեր են կատարում, որոնք ունակ են կառավարել մարդու գիտակցությունը: Քարփենթերը հավաստիացնում էր, որ զգացմունքները և ցանկությունը միայն կարող են ասոցացվել մարմնի նյարդային համակարգի հետ և ոչ թե բանականության: Լուրենսը ընդունում էր վերջինիս տեսակետը և հետագայում դա կիրառեց իր այն տեսության մեջ, որ ցանկության միջոցով մարդը միավորվում է մյուսների հետ և, վերջիվերջո, տիեզերքի հետ:

Նիցշեն, հավանաբար, Լուրենսի համար ամենազդեցիկ գրողներից էր՝ միտք - մարմնի կաղապարի տեսանկյունից: Նիցշեի համար մարդը չի կարող ճանաչել իրականությունը գիտակցության կամ բանականության միջոցով: Այն հնարավոր է միայն ազդակների շնորհիվ՝ անմիջական մարմնի և մեծ ցանկության շնորհիվ: Բնագոյը և ցանկությունն են դրդում մարդուն ապրել և ոչ թե հոգին կամ բանականությունը: Ըստ նրա՝ այն ամենը, ինչ լավ է, բնագոյ է, իսկ այն ամենը, ինչ վատ է և սխալ կապ չունի բնագոյի հետ (Schneider 1986:58): Նա արդարացնում է «ազնվական մարդու» հպարտությունը, ում առաքելությունն է ստեղծել մի նոր աշխարհ, որտեղ բնագոյներով ապրելը կլինի բնական: Լուրենսը, ինչպես և Նիցշեն «ազնվական մարդու» բնագոյային կյանքի կողմնակիցն էր.

«Երբ մենք իսկապես ցանկանում ենք ապրել, ապա առաջնորդվում ենք բնագոյներով և ինտուիցիայով: Դրանք ինձ դրդում են փախչել քաղթենի կանանցից և ինձ շրջապատել կեռասենու ծառերով, կեսօրին զգալ պարզ լճի սառնորակ ջուրը, հիանալ կանաչ մարգագետիններով» (Lawrence 1928:106):

Նիցշեն պնդում է, որ արևմտյան քաղաքակրթությունը, բանականությունը, գիտությունը իշխում են մեր կյանքը և ոչնչացնում են կիրքն ու բնագոյները:

1915 թ-ին Լուրենսը դարձավ Բլումսբրի-Քեմբրիջ խմբի անդամ կարծելով, որ այն կօգնի իրեն Անգլիայում նոր հասարակություն ձևավորելու գործում: Սակայն նա շուտով խորը հիասթափություն ապրեց, քանի որ Բերթրադ Ռասսելի դասախոսությունները Լուրենսին «կործանարար» թվացին: Այն, ինչ Լուրենսը ցանկանում էր, արմատական փոփոխությունն էր, նոր աշխարհի ստեղծումը, որը հիմնված կլիներ օրգանական կյանքի և տիեզերական միասնության վրա: Սակայն Քեմբրիջի մթնոլորտը նրան ճնշող թվաց: Այնտեղ, ըստ նրա, իշխում էր

ցինիզմը: Բլումսբրի-Քեմբրիջ խումբը առաջնային էր համարում և կարևորում էր փաստարկը, գիտությունը և բանականությունը, որը ոչ մի առնչություն չէր կարող ունենալ Լոուրենսի՝ նոր օրգանական կյանք ստեղծելու երազանքի հետ: Օրգանական կյանքը, ըստ նրա, հիմնված է բնագոյների, ինտուիցիայի, ազդակների վրա, որոնք պատկանում են անգիտակցական մարմնին: Ռասսելին ուղղված նամակում Լոուրենսը նրան անվանում է «մարդկության թշնամի»: Հետագայում այդ նույն տարվա դեկտեմբերին, Ֆրագերի «Ոսկե ճյուղը» և «Տոտեմիզմ» գրքերը կարդալուց հետո Լոուրենսը կրկին գրում է Ռասսելին. «Այժմ ես լիովին համոզված եմ նրանում՝ ինչին հավատում էի, երբ դեռ քսան տարեկան էի, որ բացի ուղեղի և նյարդային համակարգերից գոյություն ունի մեկ այլ համակարգ, որը կոչվում է արյան գիտակցություն (blood consciousness), այլ կերպ ասած՝ բնագոյային համակարգ: Ռասսելը Լոուրենսի նամակին պատասխանում է՝ գրելով, որ կարծում է նա շեղվել է իրական ճանապարհից և դատապարտում է նրա խորհրդավոր, միստիկ փիլիսոփայությունը «արյան» վերաբերյալ՝ այն մեկ բառով անվանելով «աղբ» (Chappelle 1996:83):

Այս ժամանակահատվածում Լոուրենսը ավելի և ավելի էր համոզվում, որ Անգլիան կործանվում է: Հասարակությունը, մտավոր գիտելիքի, բանականության գերին դառնալով, միմիայն կեղծ և ոչ իրական զգացմունքներ կարող է ունենալ: Այսօր շատ մարդիկ ապրում և մահանում են՝ առանց իրական զգացմունքներ ապրելու: Կեղծ զգացմունքը առաջացել է բանականության արդյունքում: Լոուրենսի կարծիքով ամուսնությունը պետք է հիմնված լինի իրական զգացմունքների վրա, սրտի ծայրի վրա և ոչ շահի: Ժամանակակից մարդիկ ամուսնանում են հաշվարկով: Մինչ ամուսնությունը նրանք ծանր ու թեթև են անում, թե ինչ օգուտ կարող են քաղել այդ ամուսնությունից: Ըստ Լոուրենսի՝ մարդու կյանքում սիրո և ամուսնության մեջ առկա է ֆատալիզմի տարրը: Այսպես ընդունված է մտածել նաև Բուդդիզմում: Ա. Բրեսթերը մտաբերում է Լոուրենսի բառերը մի երկխոսության ժամանակ. «Հնդկացիները շատ ձիշտ են մտածում, որ ճակատագրի ձեռքը խառն է երեք իրադարձություններում՝ ծնունդ, ամուսնություն և մահ, և ոչ մեկ չի կարող փախչել իր ճակատագրից (Brewster 1934: 276):

Լոուրենսի ընկալմամբ՝ ժամանակակից աշխարհը սահմանագիծ է դնում կամքի և զգացմունքի, բանականության և մարմնի, գիտակցականի և անգիտակցականի, ռացիոնալի և ինտուիցիայի միջև: Կյանքի տարբեր այս երկու սկզբունքները պատերազմում են միմյանց դեմ: Լոուրենսը ցանկանում է, որ մարդիկ ապրեն իրենց մարմնի բնական ազդակներով: Սակայն Լոուրենսը ամբողջովին չի մերժում բանականությունը: Նա ձգտում էր, որ բանականության և բնագոյի միջև պահպանվի հավասարակշռությունը:

Լոուրենսը կարծում է, որ նկարելիս կամ ստեղծագործելիս մարդը գործի է դնում թե՛ իր բանական գիտակցությունը, թե՛ բնագոյը և թե՛ ինտուիցիան: Այս դեպքում դրանք ծուլվում, դառնում են մեկ ամբողջություն: Բնագոյը, ինտուիցիան, բանականությունը, վերածվում են մեկ ամբողջական գիտակցության. «Այս ձևերը պետք է լրացնեն միմյանց» (Davies 1973:152): Սակայն նա քաջատեղյակ էր, որ գիտնականների մեծ մասը գործի է դնում միայն իր բանականությունը և չի առաջնորդվում բնագոյով: Լոուրենսը հիացած է ֆրանսիացի արվեստագետ Սեզանով (Cézanne), քանի որ վերջինս պայքարում էր կլիշեների դեմ: Իր ստեղծագործական ողջ կյանքի ընթացքում նա հետևել է իր ինտուի-

ցիային: Նա մարդկանց և բնապատկերներ էր նկարում բնագոյով և անընդհատ պայքարում էր, որպէսզի ազատվի իր բանական գիտակցության միջամտութիւնից: Ըստ Լոուրենսի՝ իրական արվեստագետը նա է, ով առաջնորդվում է ինտուիցիայով և բնագոյներով: Լոուրենսը ցանկանում էր ապրել, իսկապէս ապրել իր մարմնում, ճանաչել աշխարհը բնական ազդակների միջոցով (Davies 1973: 146-147): Նրա կարծիքով մարդու բնագոյային գիտակցության պակասի արդյունքում անգլիական նկարներում բացակայում է զգացմունքայնությունը: Նրան թվում է, որ միայն Ուիլլիամ Բլէյքն է բացառություն կազմում անգլիական նկարիչներից. «Բլէյքը նկարում է՝ գործի դնելով իր ինտուիցիան, ազատություն տալով իր բնագոյներին» (Davies 1973:134): Ըստ Լոուրենսի՝ արվեստագետը կարող է ստեղծագործել միայն այն դեպքում, երբ նա զգում է կենարար ուժը իր մարմնում՝ իր արյան մեջ և իր ոսկորներում: Միմիայն ինտուիցիայի և բնագոյի միջոցով մարդը կարող է իսկապէս ճանաչել աշխարհը, նրանում գոյություն ունեցող ցանկացած բնական երևույթ, որը ապրում և շնչում է իր կողքին:

Դառսիզմում ընդունված է մտածել, որ իրականությունը բանականության սահմաններից դուրս է, այն չի կարող ենթարկվել ռացիոնալ վերլուծության, և միմիայն անմիջական ինտուիցիայի շնորհիվ կարելի է ընկալել, ճանաչել իրականությունը (Wills 1987:55.): Լոուրենսը «անմիջական ինտուիցիա» բառակապակցությունը փոխարինում է «հոգի», «անգիտակցական», «արյան գիտակցություն» գաղափարներով: Դառսիզմում ընդունված է կարծել նաև, որ բանական գիտակցությունը կարող է միայն փորձ կուտակել վերլուծական նկատառումներով (Wills 1987:106): Այն մտքերն ու գաղափարները, որոնք առաջանում են մտածելու արդյունքում անպայման չէ, որ ճիշտ լինեն: Այսպիսով, կարիք չկա կառչել միայն բանականությունից և թողնել, որ այն իշխի մեր բնագոյների և ինտուիցիայի վրա: Ըստ Լոուրենսի՝ այն, ինչ մարդը մտածում է, չի համապատասխանում իրականությանը, քանի որ ռացիոնալ բանականությունը կուտակված փորձի կամ գիտելիքի պահեստ է: Լոուրենսը կոչ է անում մարդկանց չապրել իդեալներով կամ գաղափարներով (Lawrence 1920:64): «Կինը, ով հեռացավ» պատմվածքում Լոուրենսը, սպիտակամորթ կնոջը հնդկացիներին զոհաբերելով, ցույց է տալիս, որ նախնադարյան իրականության ընկալումը դուրս է բանական գիտակցության սահմաններից: Կնոջ կյանքը իմաստազրկվել էր, որը նրան բնագոյաբար դրդել է միանալ հնդկացի ցեղերին, որտեղ նա հասկանում է, որ «սպիտակ և կարմիր գիտակցությունների» միջև մեծ տարբերություն կա: Հնդկացիները չեն գործում եսասիրությունից դրդված, նրանք ապրում են բնագոյներով, կրքով: Նրանց սերն ու ատելությունը «արյան գիտակցության» ազդակներն են: Լինելով սպիտակամորթ մարդկանցից ամբողջովին տարբերվող այս մարդկանց մեջ՝ կնոջ «սպիտակ գիտակցությունը» աստիճանաբար զիջում է հնդկացիների «տիեզերական գիտակցությանը»: Կնոջ սովորական գիտակցությունը աստիճանաբար լքում է իրեն, որին փոխարինելու է գալիս տիեզերական գիտակցությունը: Նա թմրել էր՝ ասես թմրադեղերի ազդեցության տակ լինելով: Հնդկացիները նրան այնպիսի վիճակի էին հասցրել, որ նա այլևս անկարող էր դիմադրել (Lawrence 1928:76):

Լոուրենսը փորձել է սպիտակամորթ կնոջ գիտակցությունը փոխարինել հնդկացիների գիտակցությամբ:

Հավասարակշռության պահպանման անհրաժեշտությունը բանականության և բնագոյների միջև

Լոուրենսը վայելում էր ոչ բանական էակների՝ կենդանիների և բույսերի ընկերակցությունը, որոնց հետ նա ի սկզբանե անքակտելիորեն կապված էր: Ինչոր կապ կար նրա և իր կովի՝ Սյուզանի միջև, և այս կապը, կարծես, վերածվել էր սիրո (Lawrence 1988:334): Կենդանիները չգիտեն, թե ինչ է գիտակցությունը, նրանք ապրում են բնագոյներով, բնական օրենքներին համապատասխան, ուստի նրանք ճշտի խորհրդանիշն են (Lawrence 1922:210): Լոուրենսը ժխտում էր կարծրացած տեսակետները, մեխանիկական օրենքները, գիտությունը: Նա ատելությամբ էր լցվում, երբ ջուրը բնութագրվում էր քիմիական տարրերով՝ H₂O: Նրան բարկացնում էր, երբ լուսինը կամ արևը բնութագրվում էր գիտականորեն: Ըստ նրա՝ տիեզերքը կազմող տարրերը մարդն ի գորու չէ ըմբռնել, ավելին՝ տալ դրանց որևէ բացատրություն: Լոուրենսի կարծիքով բանական գիտակցությամբ առաջնորդվելը միմիայն մարդու անձնական գործն է: Նա պետք է որոշի, թե ինչպես ապրի: Սակայն նա ցանկանում էր զգուշացնել մարդկանց, որ դա կկործանի նրանց (Lawrence 1922:65): Քանի որ մարդը բնական էակ է, ապա պետք է ճանաչի աշխարհը բնական ճանապարհով և ոչ արհեստականորեն՝ գրքեր կամ դասախոսություններ կարդալով: Նույն կերպ էլ սիրո մեջ նա խրախուսում է սիրահար զույգերին առաջնորդվել բնական ազդակներով, տրվել կրքին և լինել ազատ այդ հարաբերություններում, ինչպես և ինքը բնությունը:

Շեռագայում փիլիսոփան գրում է, որ ճշմարտությունը կարելի է ընկալել միայն բանականության և մարմնի համատեղ գործունեության միջոցով և պետք է հավասարակշռություն լինի դրանց միջև: Մարմինն ու բանականությունը պետք է ապրեն ներդաշնակ (Lawrence 1922:91): Լոուրենսը գրում է.

«Մենք բոլորս էլ գիտենք, որ ժամանակակից կյանքում չենք կարող ապրել միմիայն բնագոյներով: Եվ ոչ էլ միմիայն բանականությամբ: Սակայն նա նշում է, որ ժամանակակից մարդը նախապատվությունը տալիս է գիտությանը և անտեսում է բնագոյներով առաջնորդվելը: Միակ ուղեցույցը պետք է լինի սեփական հոգու ձայնը» (Lawrence 1922:131):

Լոուրենսը հավաստիացնում է, որ այն նկարները, որոնք նկարիչը նկարում է բնության գրկում՝ մաքուր օդ շնչելով և առեղծվածային ուժն իր երակներում զգալով, անկրկնելի են և բացառիկ: Երբ ձեռքի մի հպումով առաջանում է գլուխ-գործոց:

Լոուրենսի մահից տասնամյակներ անց մարդու բանականության բժշկական հետազոտությունները ցույց տվեցին, որ ուղեղի աջ և ձախ կիսագնդերը տեղեկատվությունը մշակում են տարբեր կերպ: Բեն Ուիլլսը «Արվեստի Դաոս» ակնարկում արևելյան մտածելակերպը ուսումնասիրելիս նշում է, որ ուղեղի ձախ կիսագունդը պատասխանատու է խոսքի, գիտական վերլուծության համար: Շեռագոտությունները պարզել են, որ ուղեղի յուրաքանչյուր կիսագունդ մասնագիտացած է և կառավարում է տարբեր ֆունկցիաներ, մշակում է տարաբնույթ տեղեկատվություն և գործ ունի տարատեսակ խնդիրների հետ: Աջ կիսագունդը գործ ունի ինտուիցիայի, երևակայության, զգացմունքների հետ: Եվ խնդիրն այն է, որ ժամանակակից աշխարհը նախապատվությունը տալիս է ձախ կիսագնդին, որտեղ խոսքերը, հաշվարկներն ու տրամաբանությունն են գահի վրա, իսկ մեր բնության ավելի ստեղծագործական, ինտուիտիվ, զգացմունքա-

յին կողմը հաճախ գտնվում է ստորադասի դերում և ամբողջովին արհամարհված է ու մոռացված (Wills 1987:33): Լոուրենսը համամիտ էր Բեն Ուիլլսի տեսակետի հետ: Նրան անհանգստացնում էր այն, թե ինչպես են երեխաները ստանում իրենց կրթությունը: Նրա կարծիքով դա շատ վտանգավոր է երեխաների համար, քանի որ այս կերպ փոխվում է երեխայի էությունը: Նա խրախուսում է, որ երեխաները ճանաչեն իրականությունը իրենց մարմնի զգայարաններով: Նա «Անգիտակցականի երևակայություն» ակնարկում գրում է. «Երեխան փոքրիկ տեսախցիկ չէ: Նա փոքրիկ կենսական մի օրգանիզմ է, որը կարիք ունի շփվելու արտաքին աշխարհի երևույթների հետ, որոնք նույնքան և բնական են, որքան ինքը՝ երեխա: Շատ կարևոր է երեխային հաճախ մենակ թողնել, որպեսզի ճանաչի աշխարհը» (Lawrence 1922:87): Նա կոչ է անում չափահասներին, որպեսզի իրենց երեխաներին ցույց տան իրականությունը ընկալելու իրական և ճշմարիտ ճանապարհը, դաստիարակեն բնական կերպով և ոչ արհեստական՝ նրանց մեջ սեր սերմանելով միայն ակադեմիկական գիտության նկատմամբ: Պարզապես հանցագործություն է երեխայի ուղեղը լցնել անհեթեթությամբ: Ապրելով բնագոյններով՝ նշանակում է ճանաչել իրականությունը՝ զգալով այն մարմնի յուրաքանչյուր զգայարանով: Ահա սա է իրական ազատությունը, որի ժամանակ մարդը վայելում է հոգու անկախության և վախերից, անտեղի անհանգստությունից ազատ լինելու վիճակը (Lawrence 1923:13): Մարդը պետք է սովորի ապրել՝ անտեսելով այլ մարդկանց կարծիքը: Ահա այսպես է ապրել Լոուրենսը: Նրա համար կարևոր դեր չի ունեցել հասարակության կարծիքը: Նա գիտակցում էր, որ միայն ինքն է պատասխանատու իր սեփական կյանքի համար: Ահա այսպես՝ հաշվի չառնելով հասարակության կարծիքը՝ նա ամուսնացավ գերմանացի արիստոկրատ մի կնոջ՝ Ֆրիդայի հետ, ով այնքան տարբեր էր իրենից:

Եզրակացություն

Դ.Հ. Լոուրենսը բնագրի և բանականության հակադրության տեսությամբ փորձում է ցույց տալ, որ ժամանակակից մարդիկ առաջնորդվում են կարծրացած տեսակետներով, մեխանիկական օրենքներով և գիտությամբ՝ անտեսելով բնական ազդակները: Սակայն, նա քաջ գիտակցում է, որ ժամանակակից կյանքում մարդը չի կարող ապրել միմիայն բնագոյններով և ոչ էլ՝ միմիայն բանականությամբ: Ճշմարտությունը կարելի է ընկալել միայն բանականության և մարմնի համատեղ գործունեության միջոցով, և պետք է հավասարակշռություն լինի դրանց միջև:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Davies, J.V. (1973) *Lawrence on Hardy and Painting*. London: Heinemann.
2. Brewster, E. and A. (1934) *D.H. Lawrence: Reminiscences and Correspondence*. London: Martin Secker.
3. Lawrence, D.H. (1922) *Fantasia of the Unconscious and Psychoanalysis and the Unconsciousness*. 2004 ed. Cambridge: CUP.
4. Lawrence, D.H. *Love Was Once a Little Boy in Reflections on the Death of a Porcupine and Other Essays*. Cambridge: CUP.

5. Lawrence, D.H. (1923) *Studies in Classic American Literature*, 2003 ed. Cambridge: CUP.
6. Lawrence, D.H. (1925) *The Woman Who Rode Away, the Woman Who Rode Away and Other Stories*. Cambridge: CUP.
7. Schneider, D.J. (1986) *The Consciousness of D.H. Lawrence*. Kansas: University Press of Kansas.
8. Wills, B. (1987) *The Tao of Art*. London: Century.

Противопоставление сознания и инстинкта по Д.Г. Лоуренсу

Цель данной статьи заключается в представлении точки зрения Д.Г. Лоуренса о инстинкте и сознании, противопоставление которых прекрасно выражается в рассказе “Девушка, которая уехала”. В рассказе Лоуренс пытается показать, что восприятие первобытной реальности находится вне сознания человека. Оно должно основываться на инстинктах.

The Contrast of Consciousness and Instinct by D.H. Lawrence

The aim of this article is to present D.H. Lawrence’s viewpoint about instinct and consciousness, the contrast of which is perfectly expressed in the short story “Woman who rode away” where Lawrence tries to show that the perception of “primitive reality” is beyond one’s consciousness. It should be done instinctively.